

Իրինն Բազաուրի

**ԼԵԶՎԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԵՎ
ԵՐԿԼԵԶՈՒ «ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ»**

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Տվյալ հոդվածի նպատակն է ընթերցողին ծանոթացնել երեխայի և նաև դեռահասի լեզվական զարգացման վրա ազդող գործոնները, ինչպիսիք են սոցիալականը, երկլեզվայինը, մշակութայինը և այլն: Հոդվածի երկրորդ մասը կվերաբերի երկլեզու հիշողությանը և առաջին և երկրորդ լեզվի միջև առկա կապին, նաև քննարկված է մի լեզվից մյուսին անցումը և լեզուների խառնակման գործընթացը: Եզրափակիչ մասում խոսքը «տրանսլինգվիզմի» մասին է, որպես համաշխարհային մակարդակի ֆենոմենի և հենց տրանսլինգվիզմի համատեքստում քննարկված են բազմալեզու գրողները:

21-րդ դարում երկլեզվությունը իրականություն է, և մենք հանդիսանում ենք այս իրականության մի մասը: Աշխարհի կեսն առանց այն էլ կամ երկլեզու է կամ բազմալեզու, իսկ աշխարհի մյուս կեսը նրա մտածումների մեջ է, թե որ լեզուն ընտրի որպես երկրորդ կամ երրորդ լեզու: Թեպետ, չնայած երկլեզու մարդկանց նկատմամբ այսպիսի աճող պահանջարկին, երկլեզվությունը, որպես երևույթ այսօր էլ հանդիսանում է քննարկման և բանավեճի առարկա: Բավականին հաճախակի են արհեստավարժների, ուսուցիչների և հոգեբանների կողմից երաշխավորությունները՝ կապված երկլեզվության բացասական կողմերի հետ: Այսօրվա դրությամբ երկլեզվությունն ուսումնասիրված երևույթ է: Վերջին տասնամյակների ընթացքում բազմաթիվ հետազոտություններ

են անցկացվել, որոնց արդյունքները ոչ թե երկլեզվության թերությունները, այլ մի շարք հարցերում առավելությունն են ապացուցում: Թեպետ որոշակի վախ հասարակության մեջ միևնույն է գոյություն ունի: Մինչև երկրորդ լեզվի ուսուցմանը և երկլեզվությանն անդրադառնալը, նշանակալի է քննարկել հենց լեզվի յուրացման գործընթացի հետ կապված գործոնները, որոնք կարևորագույն դեր են կատարում երեխայի և դեռահասի լեզվական զարգացման գործընթացում: Տվյալ հոդվածում ներկայացված են այնպիսի փաստեր, որոնք առաջին հայացքից կապ չունեն լեզվի յուրացման հետ, թեպետ հետազոտությունների համաձայն երեխայի լեզվական զարգացման ժամանակ մեծ նշանակություն ունի մոր բնավորությունը, բնական միջավայրը և նույնիսկ սեռը: Իսկ ինչ վերաբերում է երկու

լեզուների զուգահեռ ռեժիմում յուրացմանը, այստեղ միշտ հարց է ծագում, թե ինչպես են մարդու գլխում տեղ գտնում այս երկու լեզուները: Այս դեպքում հիշողությունը երկլեզու է, հողվածում ներկայացված է երկլեզու հիշողության գծանկարչական մոդելը: Կանդրադառնանք մաս երկլեզվությանն ուղեկցող գործընթացին, որը հայտնի է լեզվական գաղտնագրերի տեղափոխման և լեզուների խառնակման անվանմամբ: Այս տեսանկյունից քննարկվել են լեզուների խառնակման պատճառները, իսկ որպես եզրակացություն ներկայացված է «տրանսլինգվիզմը», որպես ֆենոմեն, որի ժամանակ մարդիկ ոչ միայն զրուցում են և խոսում երկու կամ երեք լեզվով, այլև ստեղծում են համաշխարհային մակարդակի գլուխգործոցներ միաժամանակ մի քանի լեզվով:

Լեզվական զարգացումը և նրա վրա ազդող գործոնները

Լեզուն չի զարգանում ինքնըստինքյան և իր համար՝ այն կապված է մարդու/երեխայի զարգացման բոլոր ասպեկտների հետ, ինչպիսիք են ֆիզիկականը, կոգնիտայինը, հուզականը, սոցիալականը և մշակութայինը և ավելին է, քան որոշակի բառերի և քերականական կառուցվածքների յուրացումը (Բլյում, 1998).

Լեզվական զարգացումն ուղղակի կապի մեջ է մտավոր զարգացման հետ: Նրա ուսումնասիրումը, թե ինչպես են տեղի ունենում կոնկրետ շրջանում լեզվական նվաճումները, մեզ հնարավորություն է տալիս, որ սահմանենք տվյալ աստիճանի կոգնիտային գործընթացները (Օուեն, 1996):

Բժիշկները, կրթության մասնագետները և հետազոտողները երեխայի զարգացման ուղղությամբ երկար ժամանակ պնդում էին, որ երեխաների նկատմամբ վատ

վերաբերմունքը հարուցում է լեզվական զարգացման խափանում և բառապաշարի սակավություն: Տվյալ հարցերի հետ կապված հետազոտությունները հիմնականում որակական բնույթի են և մատնացույց են անում այն արդյունքները, որոնք կարող են վաղ հասակում առաջացնել բառապաշարային դեֆիցիտ: Տիպական զարգացման դեպքում երեխաներն իրենց մայրենի լեզուն յուրացնում են որոշ ժամանակային շրջանակում, սեփական ներքին յուրահատկությունների նախատեսմամբ: Հենց այս որոշակի տարիքային կանխատեսելի օրինաչափության դիտարկումով հետազոտողներն ապացուցում են, որ այն երեխաների մոտ, որոնց վատ են վերաբերվում դաստիարակները, նկատվում են լեզվական խափանումներ: Ապացուցված է նաև, որ մոր քերականորեն մաքուր խոսքն ուղղակի կապի մեջ է երեխայի լեզվական զարգացման հետ (Լեյտման, 1984): Ազդեցությունը և կապերը տարբեր տեսակի են՝ օրինակ՝ մայրերը, որոնք երեխաների հետ հաճախ էին կիրառում այո/ոչ պատասխան պահանջող հարցեր (օրինակ՝ սա շագանակագո՞ւյն շուն է), նրանց երեխաներն աչքի էին ընկնում օժանդակ բանավոր խոսքի պաշարի ավելի արագ զարգացմամբ, իսկ մայրերը, որոնք խոսքի մեջ հաճախ կիրառում էին հրամայական նախադասություններ (օրինակ՝ գնա, վերցրու այն), նրանց երեխաները, ընդհակառակն, ավելի դանդաղ են հարստացնում իրենց բառապաշարը (Էծայրտ, 1979): Ընդհանրապես, հետազոտություններում ընդգծվում էր նշանակալի միտում, որի համաձայն մոր կողմից հաղորդված շարահյուսական կառույցը նշանակալիորեն սահմանում է երեխայի կողմից ձեռք բերված կառույցը: Նման հետազոտություններ անցկացվեցին, որոնք կենտրոնացված էին անմիջապես

բառերի յուրացմանը: Պարզվեց, որ երեխայի բառապաշարի մակարդակը և բառերի իմացության մակարդակն ուղղակի կապի մեջ էին մոր խոսելու հետ (Huttenlocher, 1991): Նույն հետազոտությունների հիման վրա որոշվեց, որ դեպրեսիոն մայրերն ավելի քիչ ինտերակցիա են հաստատում երեխաների հետ, համապատասխանաբար, այսպիսի մայրերի երեխաների բառապաշարն ավելի աղքատ է, քան ոչ դեպրեսիոն մայրերինը (Cicchetti, 2000, Cohler, 1977, Murray, 1996):

Երեխայի կողմից լեզվի յուրացման գործընթացում կարևորագույն գործոններից մեկը սոցիո-տնտեսական կարգավիճակի բազմերանգությունն է:

Երբ գիտնականները հետազոտում էին երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի փաստերը, դրանք անպայման կապի մեջ էին սոցիո-տնտեսական կարգավիճակի հետ և վատ վերաբերմունքի փաստերը հիմնականում ընդգծվում էին ցածր սոցիո-տնտեսական կարգավիճակ ունեցող հասարակական շերտերում:

Երկարատև հետազոտությունների հետևանքով բացահայտվեց այն փաստը, որ սոցիո-տնտեսական կարգավիճակը և ընտանիքի միջավայրը անչափ մեծ ազդեցություն ունենին IQ –ի արդյունքներում: Տվյալ տարբերությունները նկատվեցին 8 տարեկան երեխաների մեջ (Moore, 1968): Մայրերի ինտելեկտի մակարդակի, ընտանիքի հասարակական-տնտեսական մակարդակի և երեխայի լեզվաբանական և մտավոր զարգացման միջև կապը քննարկվել են բազմաթիվ հետազոտություններում, որտեղ միանշանակորեն մատնացույց են արված տվյալ կապերը: Սակայն տվյալ կապերը և ազդեցությունն ավելի բացահայտ են նախադպրոցական տարիքում, իսկ այնուհետև միանում է նաև դպրոցը

(ChurCh and Katigbag, 1991, Luster and Dubow, 1992).

Հետազոտողները որոշել են, որ երեխայի բառարանը մոտավորապես 13 ամսական հասակից սկսում է հարստանալ և արդեն 16 ամսականի համար միջին հաշվով կազմում է 10-180 բառ, իսկ 23 ամսական հասակում այս թիվն աճում է մինչև 300 բառը (Ռոմ, 1999): Հետաքրքիր է նաև այն փաստը, որ սեռը, ծնվելու հերթականությունը և սահմանում են երեխայի բառարանի հարստացման արագությունը, հետազոտությունները ցույց են տվել, որ աղջիկներն ավելի արագ են զարգացնում իրենց բառարանը, քան տղաները (Էնսոն, 1994), այսպիսի տարբերությունը պայմանավորված է այն փաստով, որ աղջիկները միևնույն հասակում ավելի հասունացած են տղաների համեմատ: (Hoff, 2001): Որոշ հետազոտություններում ապացուցում են նաև այն փաստը, որ առաջին երեխաներն ավելի մեծ առավելության են տիրապետում բառարանի հարստացման գործընթացում, Հոֆն արտահայտել է կարծիք, որ ավագ երեխաները մեկը մեկի հետ կապի մեջ են ավագների հետ (Hoff, 2001):

Իրազեկության հասնելը մեկից ավելի լեզուներից ավելի բարդ նվաճվելի է, և նրա ուսումնասիրությունը նշանակալի է, որ տեղի ունենա ոչ միայն սոցիալական կողմից կամ դրսից, այլ՝ անհատապես՝ լեզուն սովորողի կտրվածքում: Անչափ շատ բանավեճեր և դատողություններ են ընթանում՝ կապված երկրորդ լեզուն սովորելու հետ, որոնք կենտրոնացված են ուսուցման մեթոդաբանության վրա, թեպետ աննշան չափով են քննարկվում այնպիսի համատեքստային գործոններն, ինչպիսիք են անհատական, սոցիալական և հասարակական գործոնները, որոնք իրենց ազդեցությունն են ունենում ուսանողի/աշակերտի ուսանման վրա: Տվյալ

սոցիալական գործոնները հնարավոր է քննարկել լեզվական, իր՝ լեզուն սովորողի, և ուսումնական գործընթացի հեռանկարից: Այսպիսի գործոնները տարբեր են, օրինակ լեզվաբանական հեռավորությունը երկու լեզուների միջև (ենթադրվում է մայրենի լեզուն և երկրորդ/օտար լեզուն), գիտելիքի մակարդակը մայրենի լեզվից, նաև հասարակական վերաբերմունքը սովորելու լեզվի նկատմամբ: Թվարկված գործոններից լայն քննարկման առարկա է հանդիսանում այն փաստը, թե ինչպիսի ազդեցություն է ունենում մայրենի լեզվի իմացությունը երկրորդ լեզվի յուրացման վրա: Պետք է նախատեսել նաև այլ կենսաբանական գործոններ, օրինակ՝ ինչպիսին է սեռը: Համեմատաբար վաղ հետազոտություններում կշռադատության առարկա էին հանդիսանում գենդերային տարբերությունները տարբեր կոգնիտային և մտավոր խնդիրների վճռման ժամանակ (Էյզիստ, 1997): Որոշ հետազոտություններում ընդգծվում էր կանանց սեռի առավելությունը լիարժեք բանավոր խոսքի ֆոնի վրա: Նման հետազոտություններից կարելի է ընդհանուր եզրակացություն անել, որ կանայք առավելության են տիրապետում վերբալ տեսակետից՝ տղամարդկանց համեմատ: Շատ հետազոտություններ վերաբերում են երկրորդ լեզվի տիրապետման գործընթացում մասնագիտության ընտրության գործոնին: Հատկանշական է, որ լեզվի նկատմամբ վերաբերմունքը տիպիկ էր օտար լեզուների և հումանիտար ուղղությունների ուսանողների համար: Նրանցից նկատելիորեն տարբերվում են ինժեներիայի, համակարգչային գիտությունների և մաթեմատիկայի ուղղության ուսանողները: Նշանակալի է նաև այն փաստը, թե ուսանման ինչ ոճ է ընտրում անհատը, քանի որ ուսանումը ներքին գործընթաց է, և այն տարբեր է յուրաքանչյուր անհատի համար:


Երկլեզու հիշողություն, ստորակարգային մոդել

Հետաքրքիր է, թե ինչպե՞ս են պահում երկլեզվայիններն իրենց լեզվական տեղեկատվությունը: Նրանց լեզվական համակարգը ներկայացված է մե՞կ, թե երկու լեզվական համակարգերում:

Երկլեզվության և ուղեղի հետ կապված կարևոր հարցերից մեկն է լատերալիզացիան (Պարադիս, 2004): Աջայինների մեծ մասը լեզվի գործառույթը ուղեղի ձախ կիսագնդով է իրականացնում (Վայդ, 2002): Նշանակալի է, թե որքանով են տարբերվում երկլեզվայինները լեզվի՝ ուղեղի ձախ կիսագնդում լատերալիզացիայի տեսակետից: Վայդը և Հուլը (2001) այս բնագավառում անցկացված հետազոտությունների մետա-վերլուծության արդյունքում եզրակացրին, որ միալեզվայիններում լատերալիզացիան տեղի է ունենում ձախում, իսկ երկլեզվայիններում երկու կողմերում էլ, առանձնապես՝ վաղ երկլեզվության դեպքում: Կիմը և նրա գործընկերները ևս (1997) հայտնաբերեցին տարբերությունը վաղ (մինչև երեք տարեկանը) և ուշ երկլեզվության միջև: Վաղ երկլեզվայինների ուղեղի մեջ երկու լեզուն տեղադրված է առանձին-առանձին, սակայն միմյանց հետ կապակցված, և ուղեղի որոշակի բջիջներ օգտագործվում են երկու լեզուների համար էլ, իսկ ուշ երկլեզվայինների ուղեղում երկու լեզուներն ավելի են առանձնացված միմյանցից (Բյկեր, 2010):

Նշանակալի է նաև, որ ակներև դառնա երկլեզու հիշողության մոդելը, որը հաճախ երկլեզվության հետ կապված առասպելների հիմքն է:

Գծանկար. ստորակարգային երկլեզու մոդել՝ ըստ Կրոլի և Ստյուարտի, 1994.



Տվյալ հարցերը համեմատաբար պարզ պատկերացնելու համար քննարկենք այսպիսի օրինակ՝ պատկերացնենք կապը «Love» և «սոցյալ» բառերի միջև վրացալեզու մարդու համար: «սոցյալ» բառը նրա համար գուցորդվում է ամեն ինչի հետ, ինչ նա սիրում է (օրինակ՝ ձյան մեջ մեջքս հեծնելու կոմպլեքսը), իսկ «Love» բառն օգտագործվում է միայն ռոմանտիկական նշանակմամբ, կապված կնոջ կամ սիրած էակի հետ (օրինակ՝ ձյան մեջ մեջքս հեծնելու): Երկլեզու հիշողության մեջ նշանակալի է նաև այն փաստը, թե ինչպես է տեղի ունենում երկու լեզվում բառերի ինտեգրումը/սահմանազատումը: Երկլեզու հիշողությունն ընկալված է որպես սահմանազատված, սակայն փոխադարձ կապի մեջ եղած երկու բառարանների միասնություն: Մեր ներկայացված գծանկարը ներկայացնում է հենց այդ: Նշանակալի է այն փաստը, որ այս երկու առանձնացված բառարանները միմյանց հետ կապված են տարբեր կապակցող պլաներով, որոնք կապվում են նաև հիմնական հայեցակարգային «պահեստի» հետ: Երկրորդ լեզվի բառարանը առաջին լեզվի բառարանի հետ միանում է հոծ պլանով, իսկ առաջինից դեպի երկրորդն

ուղղված պլանը ընդհատվող է, կամ թուլացած: Հավանաբար, հենց այս գծերի մեջ է արտացոլվում այն օրենքը, հաջորդականությունը, որի համաձայն տեղի է ունենում երկրորդ լեզվի յուրացումը: Այսպիսով, երբ երկրորդ լեզուն սովորողը երկրորդ լեզվից նոր բառ է սովորում, այս նոր բառը միշտ գուցորդվում է առաջին լեզվում գոյություն ունեցած բառի հետ: Օրինակ, երբ վրացալեզու երեխան սովորում է նոր բառապաշարային միավոր անգլերենից «House», նա այս հասկացության գուցորդություն է անում վրացերենի համապատասխան բառի հետ, այսպիսով «House»-ը հզոր գծով կկապվի վրացերեն «სახლი»-ի հետ: Տվյալ կառուցվածքի համաձայն երևում է, որ երկրորդ լեզվում առկա հասկացությունները ստորադասված են առաջին լեզվում առկա հասկացություններին (Հերեդիա, 1996):

Երկլեզվայինները հազվադեպ են թարգմանում առաջին լեզվից երկրորդին, այդ պատճառով է առաջին լեզվից դուրս եկող գիծն ավելի թույլ է և ընդհատվող: Երկրորդ լեզու սովորելիս հիմնականում տեղի է ունենում այնպիսի բառերի ուսանում, որոնք առաջին լեզվի բառապաշարում արդեն գոյություն ունեն, կամ պարզ ասած, երկրորդ լեզվում գոյություն ունեցած

պաշարը կախված է առաջին լեզվում գոյություն ունեցած պաշարից, և հակառակը համարյա տեղի չի ունենում, հենց այս կախվածությունն է արտահայտված հզոր և թույլ սլաքներով:

Բացի երկու լեզուներում առկա բառարաններից, երկլեզու հիշողությունը բաղկացած է ևս մեկ բաղադրամասից, որը կարող ենք անվանել հայեցակարգային «պահեստ», կամ հասկացությունների պաշար, որտեղ տեղադրված են վերացական պատկերացումներ տիեզերքի մասին: Տվյալ հայեցակարգային «պահեստը» կապված է երկու լեզուների բառապաշարի հետ, թեպետ կապն առաջին լեզվի հետ ավելի հզոր է և կայուն՝ երկրորդ լեզվի համեմատ, ինչը հստակ երևում է նաև կապակցող սլաքներից: Ելնելով տրամաբանական դատողությունից՝ պարզ է, որ թարգմանելու դեպքում երկլեզվայինն ավելի արագ կթարգմանի երկրորդ լեզվից առաջին լեզվին, օրինակ՝ (house - հաուս), քան հակառակը:

Նշանակալի է այն հանգամանքի նախատեսումը, որ քննարկված մոդելը և ներկայացված թույլ և հզոր միացնող սլաքները փոխվում են, երբ խոսքը հաշվեկշռված կամ լիարժեք երկլեզվային հիշողության մասին է: Այս ժամանակ թարգմանության գործընթացը մի լեզվից մյուսին և ընդհակառակը չի տարբերվում, և հայեցակարգային «պահեստի» հետ էլ երկու լեզուների բառարանը միանման է կապված: Բացի այդ, առաջին և երկրորդ լեզուն չպետք է հասկանանք անպայման մայրենի և օտար լեզու, հնարավոր է, որ առաջին լեզուն լինի ավելի դոմինանտ լեզու, իսկ երկրորդը, թեկուզ մայրենի, սակայն պակաս դոմինանտ (Հերեդիա, 1996):

Անցում մի լեզվից մյուսին և լեզուների խառնակում

Երկլեզվության և երկու լեզուների միջև սահմանների և կապերի սահմանման ժամանակ, նշանակալի է ևս մեկ հարցի վերլուծումը և լայն հասարակայնությանը ներկայացումը: Այս երևույթը հայտնի է լեզուների միջև անցումների և լեզուների խառնակման անունով: Կարող ենք օգտագործել նաև «գաղտնագրային անցում» և «գաղտնագրային շփոթում» տերմինները:

Լեզվաբանական բազմերանգության մեջ գաղտնագիր տերմինը բնականորեն և հայեցակարգորեն զուգորդվում է կոնկրետ լեզվի կամ բարբառի հետ: Ռոմեյնը նշում էր. «Ես կօգտագործեմ գաղտնագիր բառը, որը կվերաբերի ոչ միայն որևէ տարբերվող լեզվի, այլ առանձին լեզուների մեջ եղած տարատեսակներին և տարբեր ոճերին (Ռոմեյնը 1995): Լեզվաբանական տեսակետից շատ հետազոտողներ չեն նախատեսում տվյալ բացատրությունը՝ կապված գաղտնագրի հետ: Լեզվաբանական «գաղտնագիրը» կարող է արտահայտել ոչ թե կոնկրետ լեզու, այլ վերբալ բաղադրամաս, որը կարող է լինել ավելի փոքր, քան ձևային, կամ այնպիսի համալիր, ինչպես ամբողջությամբ լեզվական համակարգը:

Երկլեզվության քննարկման ժամանակ կարևորագույն հարցերից մեկը, որ հաճախ առաջ են քաշում ծնողները և ուսուցիչները, երեխայի կողմից երկու լեզուների միմյանց հետ շփոթելն է: «Յոնգլոս» (հինդի և անգլերեն), «Ենգլոս» (իսպաներեն և անգլերեն), «Եյե-մեյե» (տեխասերեն և մեքսիկերեն) և «Եյե-մեյե» (ուելսերեն և անգլերեն) հաճախ կիրառվում է որպես արտահայտություն երեխաների կողմից՝ լեզուների շփոթելն ընդգծելու համար: Թեպետ, ուշագրավ է, որ լեզուների շփոթելը կամ մի լեզվից մյուսին անցնելը

հնարավոր է որոշակի իրավիճակներում լինի ընդունելի և նորմալ: Ուշագրավ է, որ միալեզու մարդիկ բացասական վերաբերմունք ունեն մի լեզվից մյուս լեզվին անցնելու գործընթացի նկատմամբ, և նրանք դա ընկալում են որպես թերություն և երկու լեզուների չիմացություն: Ոչ էլ երկլեզվայիններն են այս գործընթացը մինչև վերջ դրական ընկալում և հաճախ նույնիսկ ներողություն են խնդրում մի լեզվից մյուսին անցնելիս, թեպետ հատկանշական է, որ լեզուների անցումը նշանակալի լեզվաբանական գործիք է: Այս գործընթացը պատահական չէ և գիտակցված և տրամաբանական մտածողության արդյունք է: Երկլեզվայինների համար լեզուներից մեկը գլխավորն է, որով ճիշտ է կառուցում քերականական կառույցները թե նախադասությունների կազմը, այս լեզուն անվանում են նաև մատրիցային լեզու: Շատ քիչ երկլեզվայիններ են կարողանում կիրառել երկու լեզուները միմյանցից սահմանազատված, իսկ, թե ինչ ուղիներով է տեղի ունենում լեզուների շփոթումը, շատ դժվար և տարբերվող հարց է: Գրոսիենը (1992) սահմանազատել է «միալեզու ռեժիմ» (երբ երկլեզվայինը կիրառում է մեկ լեզու միալեզու զրուցակցի հետ) և «երկլեզու ռեժիմ» (երբ երկլեզվայինը երկլեզվայինների միջավայրում կարող է մի լեզվից մյուսը փոխվել): «Միալեզու ռեժիմի» դեպքում նույնիսկ երկլեզվայինները հաճախ տեղափոխվում են երկրորդ լեզվին՝ առանց նախօրոք մտահղացման: Մի լեզվից մյուսին անցնելը պայմանավորում է լեզվական կարողությունը, առկա իրավիճակը և համատեքստը, հարաբերությունները զրուցակցի հետ և զրուցակիցների կարգավիճակը (Բեյկեր, 2010), համապատասխանաբար, լեզվական գաղտնագրերի փոխելը միայն լեզվաբանական հարց չէ, այլ արտացոլում է

նշանակալի սոցիալական հարաբերությունները և իշխանության բաշխման գործընթաց:

Եզրակացություն/բանավեճ

Որպես եզրակացություն ներկայացնում ենք «տրանսլինգվիզմի ֆենոմենը» և նրա հետ կապված օրինակները, որոնք միանշանակորեն մատնանշում են երկ/բազմալեզվության առավելությունները: Աշխարհում գոյություն ունեն ստեղծագործողներ, որոնք ունեն ունակություն գրելու ստեղծագործություններ մեկից ավելի լեզուներով: Դրանք կարող են համարվել համաշխարհային գրականության հրաշալիքներ: Այսպիսի ստեղծագործողները կարող են սեփական ստեղծագործությունն արտահայտել բազմապիսի վերբալ համակարգերի միջոցով, նրանք ազատ են այն մշակույթից և ինքնատիպությունից, որը նրանց մշակույթի մեջ դրված է ինքնըստինքյան: Հարցի ակներևության համար, ներկայացնում ենք համաշխարհային մասշտաբի գործիչների:

Ջոն Միլտոնի մասին (17-րդ դար, Անգլիա) ասում են, որ մինչև տեսողությունը կորցնելը նա կարդացել է Եվրոպայի համար մատչելի բոլոր գրքերը բոլոր լեզուներով, որ հրատարակվել են այն դարաշրջանում: Մեզ հայտնի է նաև, որ նա գրում էր ոչ միայն անգլերեն, այլև լատիներեն, հունարեն և հրեերեն: «Ինչ 12 տարեկան դարձա, դրանից հետո չեմ հիշում, որ մինչև կեսգիշեր պառկեի անկողին, անընդհատ պարապում էի: Այսպիսի ջանադիր պարապմունքների և առանձնահատուկ լեզվաբանական ընդունակության շնորհիվ նա հենց մանուկ հասակում սովորեց լատիներենը և հունարենը, իսկ մի փոքր ժամանակ անց՝ ֆրանսերեն, իտալերեն, հրեերեն, խալդերեն

և սիրիերեն: Նրան հիշատակում են որպես մեծ անգլիացի հեղինակի և լավ բանավիճողի:

Վլադիմեր Նաբոկով՝ ռուս-ամերիկյան գրող, ստեղծագործել է 1899-1977 թվականներին, առաջին ստեղծագործությունները գրել է ռուսերեն, թեպետ համընդհանուր ճանաչում, որպես արձակագիր, նրան բերել են անգլերեն գրված վեպերը: Նաբոկովի հանրահայտ աշխատությունն անգլերեն գրված «Լոլիտա»-ն է (1955), քննադատները հաճախ այս վեպն անվանում են 20-րդ դարի կարևորագույն ստեղծագործություն: Արիստոկրատների ընտանիքում ծնված Նաբոկովը մանկությունը և պատանեկությունն անց է կացրել Ռուսաստանում, ընտանիքի անդամները խոսում էին ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն, այդ պատճառով էլ նա մանկուց ընտելացել է երեք լեզվով խոսելուն: Հաջողության հասնելու մեջ նրան չի խանգարել երկ/բազմալեզվությունը:

Անհնար է տրանսլինգվիզմի համատեքստում չքննարկել անվանի իռլանդացի գրող, բանաստեղծ և դրամատուրգ **Սամուել Բեկետին** (1906-1989), որը զուգահեռ ռեժիմում ստեղծում էր գլուխգործոցներ ֆրանսերեն և անգլերեն: Բեկետի այցեքարտը 1952 թվականին գրված «Գողոթի սպասման մեջ» պիեսն է: 1969 թվականին Բեկետը նոբելյան մրցանակ է ստանում գրականության բնագավառում:

Անգլիացի գրող և անգլիական գրականության դասական **Ջոզեֆ Կոնրադտը** (1857-1924) ծագումով լեհ էր, թեպետ ազատ տիրապետում էր անգլերենին, ֆրանսերենին, լեհերենին և ռուսերենին:

Տեղափոխվենք Վրաստան և հիշենք անվանի բանաստեղծ **Եթիմ Գուրջին** (1875-1940), որը ժողովրդական բանաստեղծ և աշուղ էր, հին Թբիլիսիի աշուղական պոեզիայի լավագույն ներկայացուցիչը:

Եթիմ Գուրջին բանաստեղծություններ էր գրում վրացերեն, հայերեն և ադրբեջաներեն:

Վրաստանում գործում էր ազգությամբ հայ բանաստեղծ և աշուղ **Սայաթ Նովան** (1712-1795), նա հայտնի էր իր բնաստեղծություններով, քամանչա նվագելով: Սայաթ Նովան Հերակլ Երկրորդ թագավորի արքունիքի երաժիշտն էր և երգիչը: Մեզ են հասել Սայաթ Նովայի ստեղծած մոտավորապես 200 երգեր: Թեպետ նա պետք է ստեղծած ունենար հազարավոր երգեր: Նրա երգերի մեծ մասը գրված են հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն:

Գլոբալ տիեզերքը կարող ենք պատկերացնել որպես լեզվի տիեզերք: Թեպետ լեզվի նշանակությունը բոլորի համար միանման չէ: Եթե լեզուն քննարկենք որպես հաղորդակցման միջոց, որն օգտագործվում է հեռախոսի, ինտերնետի, տեսակոնֆերանսների համար, այդ դեպքում լեզվական բազմերանգությունը կկորցնի իր հրատապությունը, քանի որ լեզվի որպես հաղորդակցման միջոցի դերում ներկայացված են առանձին գլոբալ լեզուներ: Սակայն, եթե լեզուն պատկերացնենք որպես սպեցիֆիկ համակարգ, որի միջոցով տեղի է ունենում մշակույթի հաղորդումը, կյանքի պատկերումը, այդ դեպքում լեզուն ավելի մեծ ծանրաբեռնում ձեռք կբերի: Որոշ հետազոտողներ ենթադրում են, որ աշխարհում տարածված 6000 լեզուներից 21-րդ դարում կեսը չի կարողանա փրկվել (Underhili, 2009): Այսպիսի նախնազգության պատճառով լեզվաբանության մեջ նույնիսկ տերմին է հաստատվել, որը հայտնի է «Էկոլեզվաբանություն» անվանմամբ: Իսկապես, եթե գիտնականները հոգ են տանում որոշակի բույսերի և կենդանիների տեսակների փրկության մասին, ինչու չի կարելի, որ լեզուներին նույնպես աջակցեն: Բազմալեզվությունն ուժ է և ռեսուրս: Այդ պատճառով ծնողները և ուսուցիչները

չպետք է վախենան բազմալեզու կրթությունից, թեկուզ մեր կողմից ներկայացված գրողների օրինակով լավ երևում է, որ երկու և ավել լեզուներով կրթությունը ոչ թե սահմանափակում է լեզու սովորողին, այլ բազմակողմանիորեն զարգացնում և հարստացնում է նրա աշխարհայացքը:

Վերևում քննարկված հարցերի քննարկումը մեկ անգամ ևս մատնանշում է այն փաստը, որ լեզուն ընդհանրապես անչափ բարդ ֆենոմեն է, և լեզվի յուրացումը և ուսանումն ավել է, քան միայն բառեր և

նախադասություններ սերտելը: Լեզվական զարգացման հետ կապված տարբեր սոցիալական, կենսաբանական և անհատական գործոնների քննարկումը նշանակալի է, քանի որ երբ տեղ ունի աշակերտի կամ անհատի խոչընդոտում լեզվական տեսակետից, պատճառները պետք է որոնենք թվարկված գործոնների մեջ, նկատի ունենանք երկլեզու հիշողության յուրահատկությունները և լեզվաբանական խախտումների պատճառ չընկալենք միայն երկլեզվությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Բեյկեր, 2010 – Կ.Բեյկեր, Երկլեզվության և երկլեզու կրթության հիմունքները, «Քաղաքացիական կրթության և ազգամիջյան փոխհարաբերությունների կենտրոնի» 2010 թվականի վրացական տարբերակի հրատարակում:
- Էնդրյու, 2008 – Andreou, G., Andreou, E., Vlachos, P. (2008), Individual Differences in Second Language Learning among University Students. In : Language Development: Learning and Disorders. 2008, pp.145-162.
- Էյզսո, 2008 – Child Maltreatment: Effectson Gramatical and Lexical Aspects of Language acquisition. In: Language Development: Learning and Disorders. 2008, pp.99-117.
- Հոֆ-Գինսբերգ, 1991 – Hoff-Ginsberg, E. 1991. Mother-child conversation in different social classesand communicative settings. Child development, 62(4), 782-96.
- Օուենս, 1996 – Owens, R. 1996. *Language Development*. USA: Macmillan
- Գլեյտման, 1984 – Gleitman, L., Newport, M., & Gleitman, H. (1984). The current status of the motherese hypothesis. Journal of Child Language 11, 43-79.
- Անդերհիլ, 2009 – Underhill, J.W. Humboldt, worldview and language.
- Կելման, 2003 – Kellman, S.G., Switching languages: translingual writers reflect on their craft.
- Հերեդիա, 1996 – Heredia , R.R. Bilingual Memory: A Re-Revised Version of the Hierarchical Model of Bilingual Memory; www.wikipedia.org <<http://www.wikipedia.org>>

Irina Bagauri

**Bilingual Memory and Factors, which Influence the
Language Development Processes**

ABSTRACT

The present article aims to introduce to the readers social, biological, cultural and other factors, which influence child's and adult's language development. The second part of the article describes the issue of „Bilingual Memory” and the relationship between first and second languages in this context. The issue of „code-switching” and „code-mixing” processes is analysed in the third part of the article. The final part of the article is devoted to the worldwide phenomenon „Translingualism”. The multilingual writers are presented and discussed in the context of „Translingualism” in this part of the article.